ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿԻ ՂԱՐԻԲՅԱՆ

Սովետահայ լեզվաբանությունը ծանր կորուստ կրեց։ 78 տարեկան հասակում վախճանվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Սահակի Ղարիբյանը։

Արդասավոր է եղել մեծանուն հայագետի կյանքի ուղին։ Ա. Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին, Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարղալու) գյուղում, հողագործի ընտանիքում։ 1919 թ. փայլուն գնահատականներով ավարտում է Երևանի գիմնազիան։ 1923—1927 թթ. սովորել է Նորաստեղծ համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ուր գրավել է անվանի լեզվաբան Հ. Աճառյանի ուշադրությունը։ Համալսարանն ավարտելուց հետո Ա. Ղարիբյանը դառնում է Հ. Աճառյանի ասպիրանտը՝ հայոց լեզվի պատմության գծով։ 1937 թ. նա ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի («Հայերենի հոդնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվարանական արժեքը» աշխատության համար), 1946 թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի («Հայերենի «Ս» ճյուղի բարբառները» աշխատության համար) աստիճան և պրոֆեսորի կոչում։ 1947 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1960 թ.՝ իսկական անդամ։

Քսան տարուց ավելի Ա. Ղարիբյանը դասախոսել է Երևանի համալսարանում, իսկ 1934 թ. աշխատում էր Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որի հայոց լեզվի ամբիոնը ղեկավարել է մինչև 1960 թ.։ Տարբեր տարիներ նա դասախոսել է Երևանի հեռակա, ռուսական, Լենինականի, Թբիլիսիի, Բաքվի մանկավարժական ինստիտուտներում։

Ա. Ղարիբյանի գիտահետազոտական գործունեությունն ընթացել է հայ բարբառագիտության և լեզվի պատմության, բառարանագրության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրման ուղղություններով։ Նրա աշխատությունների, դասագրքերի, ձեռնարկների թիվը հասնում է երկու հարյուրի։ Նա մեծ ավանդ ներդրեց հայ բարբառների հավաքման, գիտականնկարագրության և դասավանդման գործում։ Բավական է ասել, որ մեկուկես տասնյակից ավելի բարբառներ գիտականորեն արժեքավորվել են Ա. Ղարիբյանի հետազոտությունների շնորհիվ, իսկ 6 ենթաբարբառներ նա առաջարկել է վերանվանել բարբառներ։

Ա. Ղարիբյանը գիտա-կազմակերպչական արտակարգ տաղանդ ուներ։ ՀՍՍՀ ԳԱ կազմում լեզվի ինստիտուտի ստեղծման օրվանից (1944 թ.) մինչև 1950, ապա և 1956—1961 թթ. նա գլխավորել է այդ հաստատությունը։ 1962—1976 թթ. եղել է ՀՍՍՀ ԳԱ գրադարանային խորհրդի նախագահ և հիմնակազմ գրադարանի դիրեկտոր։ 1955—1967 թթ. եղել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի, դրականության և արվեստի ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ։ 1958—1961 թթ. և 1964 թ. մինչև իր մահը վարել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալի պաշտոնը։

Իր կյանքի վերջին քսանամյակը նա նվիրեց հայկական քարտարանի և համաբարբառ բառարանների ստեղծմանը։ Իրեն հատուկ ոգևորությամբ և եռանդով այդ աշխատանքը նա սկսեց լեզվի ինստիտուտում, ապա շարունակեց հիմնակազմ գրադարանում։ Կարճ ժամանակա-

միջոցում նրա ղեկավարությամբ կազմվեցին դասական մատենագրության, ինչպես և նոր գրականության մի շարք երկերի համարարառները։

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել ակադեմիկոս Ա. Ղարիբյանի վաստակը՝ 1954 թ. նրան շնորհվել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։ 1969 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Նա պարգևատրվել է նաև մի շարք մեդալներով ու պատվոգրերով։ Ա. Ղարիբյանը ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր էր։

ՎԱՂԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր